

գունգործունէութիւն շինութեանց շատ մը հինաւորց տաճառներ կը կանգնին դարձեալ իրենց աւերալիներէն, և նորբ կը շնուին բայց անիշխանութիւնն եւ գահակալութեան վէճք վերստին նորոգեցին զյափըշտակութիւն նոր աշխարհազօրութեան շռովմայեցոց, յորոց վերջապէս նուանեցաւ թագաւորութիւնն. Եզիպտոս գրեթէ չըրս դար մնաց (30 տարի նախ քան զբրիստոս և 362 յետոյ) իբր հռովմէական գաւառ: Եզիպտոս՝ չնորհի բարեպատեհ հանգամանաց՝ որով Նեղոս և իւր հո-

վիսն՝ երկուստեք լերանց նեղ անցքերով ընական պատուարօք պաշտպանիր են, շատ հազար տարիներ անկախ մնալով լիքէացոց, Աւեմեանց և Եթովպացոց յաջողութեամբ դէմ դրածէր, թէպէտ և երբեմն նուանուած, սակայն վերջապէս միտ ինք զինքը անոնց ձեռքէն ազատած էր. բայց չէր կրնար նախկին մեծամեծ տէրութեանց ընդդիմանալ. որով հետզէտէտ անկաւ նա Ասորեստանեաց, Պարսից, Մակեդոնացոց և Յունաց իշխանութեան ներքեւ, և վերջապէս աւար եղաւ Հռովմայեցոց:

ՄՈՒՄԻՍՅԻ ԲԱՄՄՍԷՍ ԲԻ ԵՒ ՌԱՄՄՍԷՍ ԳԻ

Պ. Մասփէրօ՝ ընդհանուր առաջնորդ Եզիպտոսի հետազօտութեանց, առ Ակագեմեայն կ'ուղղէ զտեղեկագիր պեղման երեք մումիայից, զորս գտան ուրիշ բազմաթիւ մումիայից հետ' ծածուկ խորչի մը մէջ՝ 'ի Տէյր-լէ-Պահարի, ուր փոխազրեր են իրենց նախնական գերեզմաններէն հանելով, անտարկոյս 'ի թշնամեաց աղատելու համար. • Պ. Մասփէրօյի առաջնորդութեամբ հանեցին զանոնք յունիսի 1ին, ներկայութեամբ խտիւն, Տէր Տրուման վէլֆի և Նուպար Փաշայի:

Երբ մերկացուցին զիրենք բոլորովին այլ և այլ կարգ պատաններէ և կտաւներէ, այս կազմածոյն վրայ գտնուած նշանազրերէն իմացան՝ որ 5228 թուղոն տակ դասակարգեալ մումիայն՝ Մեծին Սեսոստրի կամ Ռամսէս Բնի էր: Հանդիսաւոր վայրկեան մ'եղաւ այս՝ ներկայ գտնուողաց, և իրենց զգացած սրբահաճութիւնը և յուղումը՝ արձագանգ ունեցաւ Արձանադրութեանց-ակագեմիային մէջ, երբ Պ. Վալլօն՝ մըշտընջնաւոր քարտուղարն, ընկերացը ներկայացուց հռչականուն աշխարհականին՝ ապականացու նշխարաց պատկերները:

Այս վերկենցաղումն 'ի գերեզմանէ յետ 40 դարուց, այս երեսումն՝ որ զանցեալը կը միացընէ ներկային հետ, և պատմական ճշմարտութիւնը շշափելի

կ'ընէ մեզ, որ դարուց յաջորդութեամբ տկարացեր և զրեթէ յնջուեր էր, այս ամէնն 'ի միասին՝ մեծահանդէս և վասմէն կ'ընէին զտեսարանը:

Թէպէտ հիւսուածոյից չորանալով՝ այլայլութիւններ կրած է, բայց մումիային կանգուն զիրքն, իրանը՝ որ մերկ է 'ի պատանաց, որ զմարմինն մասամբ մը գեռ ևս կը ծածկեն, ձեռքերը կուրծքին վրայ հանդշեցուցած, դըլուխը ուղղիլ և վերահայեաց, գիմակը զօրաւոր և ծանր, ազդու երեսոյթ մը կը պատճառեն: Գլուխն երկայն է, բայց փոքր, մազերն այսերուն վրայ խիստ քիչ, իսկ ծոծրակին վրայ խիտ, ճերմակ՝ բայց թաղման համար եղած պատրաստութիւնները գեղնացուցեր են. ճակատը նեղ, ցած, արծունուզն, այսքիսուոչաւոր, այտոսկրն (rommette) զուրս ցցուած, կզակն զօրաւոր, բերանն լայն առանց ատամանց, ծամելիքն ամուր: Այս ծերունի դէմքն, թէթէ մը գազանային երեսութիւ, միահեծան իշխողի դէմք կը ցուցընէ: Կուրծքն լայն, ձեռքերն բարակ և զեռ ևս կարմրացեալ հինայի: զոր թագաւորին վերջին դիազարդիկ հանդերձանաց համար գործածեր էին:

Ուրիշ անանուն մումիայ մ' ալ՝ որ Ռամսէս Բնի շիրմին մէջ գտնուեցաւ, ապականցաւ երբ ուղեցին պատանքը վրայէն հանել բայց այսու հանդերձանաց համար գործածեր էին:

րող եղանք ստուգել ընդդէմ ոմանց՝ որ այս մումիայն Նօփրիտարի թագուհի ւոյն չէ, ԱՀմէս Ա. թագաւորին կնոջ 18երորդ հարստութենէն. հաւաստեցի՞ք թէ այն՝ սպիտակացեղ ծաղկահասակ կնոջ մը նշխարն է, հաւանօրէն թամանէս թէ բազմաթիւ կանանց կամ դստերաց կամ քերց մին:

Իսկ 5229 թուոյն տակ դասակարգեալն՝ Բամանքս Գին մումիայն է: Բամանքս թէ նման լաւ պահուած չէ. երեսը ձիւթոյ զանգուածին մէջ անյայս եղերէր, ճակատը լաւ ևս համեմատական է, այտոսկրն նուազ դուրս ցցուած, բե-

րանն իմաստ լայն, շրթունքն նուրբ, ատամոնքն սպիտակ և անարատ: Կերպարանքն թերեւս Ռամսէս Բէն աւելի նրբին և համարեղ անձի ցոյց կուտայ, բայց նուազ կորով կ'երեցընէ:

Հօր և որդուց գծագրութեան մէջ նոյն տարրերութիւն և նմանութիւն կան, զորս իրենց թագաւորութեան պատմութիւնն մեր կ'ընծայէ:

Այս երկու արքայական մումիայք քանի մը փոքրիկ նորոգութիւններ պիտի ընդունենին, որպէս զի հնար լինի ապակւոյ մէջ Պուլսքի թանգարանը գնել, այցելուաց տեսութեան համար:

ՆԱՐԱՏԻԳ ՄԱՏԵԱՆ

Թ Ա Ի Կ Ի Դ Ի Դ Ե Ս . Յ Ո Ր Դ Ի Ո Յ Ո Լ Ո Ւ Ե Ս . Յ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՊԵԼՊՈՆԵՍԱԿԱՆ ՄԱՐՏԻՆ

Յ Ա . Ռ . Ջ Ա . Բ Ա . Ն

Որոց միանգամ իմաստուն լինել ցանկացան՝ առ իմաստունս գեգերել ասացաւ. մինչ զի և առաւօտ անգամ առնել առ գուրս նոցա: Եւ զի բնաւորեալ է մարդ՝ քան առ ծանօթսն և մօտաւոր՝ առ անծանօթսն և հեռաւորս յօժարել ընթանալ, թէթև համարելով զիսչ և զիսոթ և զերկարութիւն ճանապարհի, և բազում անգամ քան առ ժամանակակիցս իւր՝ առ վաղեմիս, առ որս բազմամեայ ժամանակաւ կացին երբեմն իմաստունք՝ ցանկանալով իրբե ընդ կենդանիս տեսաւորել ընդ նոսա, ընդ գրեանն նոցա անցանել և յիմաստակիր ասացուածս նոցին պարագել: Այս իոզ չեթող ինձ արհամարէն, կամ ամօթ համարել 'ի հեթանոսականս թարթափել մատեանս, զորս և գերազանցեալքն 'ի սրբոց Հարց յարգել զիտացին. և յօժարեալ եկի 'ի թարգմանութիւն Պատմութեան Պելպոնեսականին թուուկիդեայ, առ զիտունս Եւրոպայ մեծահոչակ մատենագրի: Եւ զի ամենայն գրոց վախճան է և նպատակ, իցէ և սորայս զիմաստ կէտ նպատակի՝ համարակաց մարդկայնոց կրից և ցանկութեանց տալ պատկեր ճշգրիտ. և իրբու 'ի հանգիսի անցուցանել զքաղաքագէտ որերոյն նրբահանճար խորհուրդն զօրէնս իմն տիրապետ վարչութեան, որով և պերճախօսից տալ ասպարէզ պարզելոց ատենաբանութեամբ զկամս մուաց իւրեանց առաջի ամբոխին:

Ոչ միայն բովանդակութիւն բազմամեայ զիպաց պատմութեան մատենագրիս տայ զամացելոցս հաւասարիս, այլ և յառաջարան տեսութիւնս զանձնէ նորա, զկենաց և զառաջիկայ վաստակոց աւանդէ զիփութի վկայութիւն հաստատուն: